

25 մարտի 2019թ.

քաղաք Երևան

2019 թվականի մարտի 25-ին, ժամը 11.00-ին գումարվեց (ամփոփվեց) «Հայաստանի ազգային ազդարային համալսարան» հիմնադրամի (այսուհետ նաեւ՝ Հիմնադրամ կամ Համալսարան) հոգաբարձուների խորհրդի (այսուհետ նաեւ՝ Խորհուրդ) հեռակա քվեարկությամբ (հարցման միջոցով) նիստը: Խորհրդի 28 գործող անդամներից քվեարկությանը մասնակցում էին հետևյալ 27-ը.

1. Խաչատուր Աբաջյան – Խորհրդի անդամ,
2. Վիկտոր Աբրահամյան – Խորհրդի անդամ,
3. Թոռնիկ Ալիյան – Խորհրդի անդամ,
4. Արմեն Բաբայան – Խորհրդի անդամ,
5. Աշոտ Գիլոյան – Խորհրդի անդամ,
6. Զուլիետտա Գևորգյան – Խորհրդի անդամ,
7. Գուրգեն Եղիազարյան – Խորհրդի անդամ,
8. Սերգեյ Երիցյան – Խորհրդի անդամ,
9. Վոլոդյա Էլբակյան – Խորհրդի անդամ,
10. Սարգիս Խանդանյան – Խորհրդի անդամ,
11. Աղավարդ Խաչատրյան – Խորհրդի անդամ,
12. Գոռ Խաչատրյան – Խորհրդի անդամ,
13. Հակոբ Խաչատրյան – Խորհրդի անդամ,
14. Արեգ Խոջոյան – Խորհրդի անդամ,
15. Քրիստինե Խուրշուդյան – Խորհրդի անդամ,
16. Արմեն Հարությունյան – Խորհրդի նախագահ,
17. Արմինե Հովհաննիսյան – Խորհրդի անդամ,
18. Արտյոմ Ղազարյան – Խորհրդի անդամ,
19. Կարեն Ղարախանյան – Խորհրդի քարտուղար,
20. Իրինա Ղափլանյան – Խորհրդի անդամ,
21. Գոհար Մամիկոնյան – Խորհրդի անդամ,
22. Արփինե Մկրտչյան – Խորհրդի անդամ,
23. Գարիկ Սարգսյան – Խորհրդի անդամ,
24. Գագիկ Սարգսյան – Խորհրդի անդամ,
25. Նունե Սարուխանյան – Խորհրդի անդամ,
26. Նունե Սիմոնյան – Խորհրդի անդամ,
27. Արտակ Քամալյան – Խորհրդի անդամ:

Օրակարգում՝

1. Հիմնադրամի 2018 թվականի գործունեության վերաբերյալ ֆինանսական հաշվետվության ու Անկախ աուդիտորական եզրակացության հաստատման հարցը:
2. Հիմնադրամի առանձնացված ստորաբաժանում (մասնաճյուղ) ստեղծելու հարցը:

Օրակարգում ընդգրկված բոլոր հարցերի վերաբերյալ նյութերը նախապես տրամադրվել էին Խորհրդի բոլոր անդամներին:

Հարց 1

Հիմնադրամի 2018 թվականի գործունեության վերաբերյալ ֆինանսական հաշվետվության ու անկախ աուդիտորական եզրակացության հաստատման հարցը:

Քվեարկության արդյունքները՝

Կողմ - 27 ձայն,

Դեմ - 0 ձայն,

Ձեռնպահ - 0 ձայն:

Որոշում 1.

Խորհուրդը որոշեց հաստատել «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի 2018 թվականի գործունեության վերաբերյալ ֆինանսական հաշվետվությունն ու անկախ աուդիտորական եզրակացությունը:

Հարց 2

Հիմնադրամի առանձնացված ստորաբաժանում (մասնաճյուղ) ստեղծելու հարցը:

Խորհրդի անդամներին, Համալսարանի Գիտական խորհրդի առաջարկության հիման վրա, Խորհրդի նախագահի /քարտուղարի կողմից նախապես տրամադրվել էր հետևյալ տեղեկատվությունը.

Հիմնադրամի գործունեությունն առավել ընդլայնելու նպատակով,

Հաշվի առնելով, որ ՀՀ Արագածոտնի մարզում չի գործել եւ ներկայումս էլ առկա չէ գյուղատնտեսական կրթություն ապահովող ուսումնական հաստատություն,

Հաշվի առնելով, որ Արագածոտնի մարզը, մասնավորապես Ապարանի տարածաշրջանի բնակչության պայմանները բարենպաստ են անասնապահության, մասնավորապես՝ սեփական կերային բազայի վրա գործող կաթնամսային անասնապահության, հետեւաբար կաթի վերամշակման ոլորտի զարգացման համար, ինչպես նաեւ դաշտավարության, մասնավորապես՝ կարտոֆիլաբուծության, բանջարաբուծության, դաշտային կերարտադրության համար,

Հաշվի առնելով, որ մասնագիտացման նշված ուղղությունները կարող են համապատասխան բազայի ձեւավորման դեպքում վերը նշված մասնագիտացման կարեւորագույն ուղղություններով գործնական ուսուցման հիմք հանդիսանալ: Առկա է անհրաժեշտ գյուղատնտեսական հողատեսքեր ուսումնագործնական գործընթացն արդյունավետ կազմակերպելու համար,

Մասնաճյուղը պետք է ներառի նաեւ հարակից գործող գյուղատնտեսական տնտեսություններ, քանի որ այնտեղ իրականացվելու է առավելապես գործնական, պրակտիկ ուսուցում՝ հիմնականում անասնազուբուծում եւ դաշտերում, ինչպես նաեւ մեքենատրակտորային հավաքակայանում:

Մասնաճյուղը պետք է ունենա նվազագույնը 2 գյուղատնտեսական անասնաբուծական տնտեսություն: Այդ անասնաբուծական տնտեսությունները պետք է լինեն Հայաստանի Հանրապետությունում բարձր արդյունավետությամբ գործող, օրինակելի ցուցադրական տնտեսություններ:

Մասնաճյուղի համար առաջարկում ենք հետևյալ անասնաբուծական տնտեսությունները.

- *կաթի արտադրության տնտեսություն, ֆերմա, որը ներառելու է նաեւ տավարի մսի արտադրությունը եւ հոտի վերարտադրությունը,*
- *խոզի մսի արտադրություն,*
- *նախատեսվում է նաեւ կաթի վերամշակման եւ կաթնային պարենամթերքների արտադրության արտադրամաս (հիմնականում բարձրարժեք պանրի եւ այլ տեսակների),*
- *Մասնաճյուղը պետք է ունենա իր լիարժեք մեքենատրակտորային հավաքակայանը՝ գյուղատնտեսական մեքենայացված բոլոր աշխատանքների կատարման, ինչպես նաեւ գյուղատնտեսության մեքենայացման գործնական պարապմունքների անցկացման համար,*
- *Մասնաճյուղի տնտեսությունները պետք է լինեն ինքնուրույն գործող, արդյունավետ, օրինակելի, ցուցադրական տնտեսություններ, կախվածություն չունենան այլ գյուղացիական տնտեսություններից,*

Հաշվի առնելով, որ տարածաշրջանում առկա է նախատեսվող ուսումնական կենտրոն (վարչական մաս) հիմնելու համար անհրաժեշտ նվազագույն պայմաններն ապահովող անշարժ գույք՝ ՀՀ, Արագածոտնի մարզ, Ապարան, Գայի 17 հասցեում,

Հաշվի առնելով, որ առաջարկվող պայմաններով ուսումնական կենտրոնի ստեղծումը կպահանջի շուրջ 2.5 մլն եվրոյի ներդրում (Ըստ գնահատման ուսումնական կենտրոնը ծրագրի մեկնարկից հետո 5-րդ տարվանից կարող է անցնել ինքնաֆինանսավորման), նպատակահարմար է Եվրոպական Միության աջակցությամբ իրականացվող «Որակավորումների բարելավում ավելի լավ աշխատատեղերի համար» ծրագրի շրջանակներում Գյուղատնտեսական ուսումնական կենտրոն ստեղծել Գերմանիայի Դաշնային Հանրապետության Բավարիայի նահանգի Թրիստորֆի գյուղատնտեսական ուսումնական կենտրոնի փորձից ելնելով: Այս բնագավառում հիշատակված կենտրոնն ունի երկարամյա եւ հարուստ փորձ:

Քվեարկության արդյունքները՝

Կողմ - 27 ձայն,
Դեմ - 0 ձայն,
Ձեռնպահ - 0 ձայն:

Որոշում 2.

- 2.1. Խորհուրդը միաձայն որոշեց՝ ստեղծել Հիմնադրամի առանձնացված ստորաբաժանում՝ «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի Ապարան մասնաճյուղ» անվամբ (այսուհետ նաեւ՝ Մասնաճյուղ):
- 2.2. Մասնաճյուղի գործունեությունն ապահովելու նպատակով դիմել ՀՀ կառավարությանը՝ ՀՀ, Արագածոտնի մարզ, Ապարան, Գայի 17 հասցեում գտնվող անշարժ գույքը Հիմնադրամին տրամադրելու խնդրանքով:
- 2.3. Մասնաճյուղի գործունեությունն ապահովելու նպատակով քայլեր ձեռնարկել Եվրոպական Միության աջակցությամբ իրականացվող «Որակավորումների բարելավում ավելի լավ աշխատատեղերի համար» ծրագրի շրջանակներում ֆինանսավորում ապահովելու համար:
- 2.4. Հանձարարել Հիմնադրամի տնօրենին (ռեկտորին) ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործողությունների իրականացումը:
- 2.5. Մասնաճյուղի կանոնադրության հաստատմանն ու պետական գրանցմանն անդրադառնալ հաջորդիվ՝ վերոնշյալ պայմաններն ապահովվելուց հետո:

Օրակարգի հարցերը սպառվեցին, Խորհրդի նիստը հայտարարվեց փակված: